

ՄԷՋՄՈՒՄԷԻՆՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - AHBAR
Grand'Rue de Péra, Tuxim 65

Համբարսալ իժի տեճա կաճի ՉԱՐԵՆՊԻՆՉ վե ճՈՒՄԱՆ ԻՐԹԵՍԻ

կիւնքերի ձեշր օրոնուր:

مجموعه اخبار

بک اوغلی تقسیم جادومی نومرو 70

ՂԱԶԵԹԱՄԲԱՐՆԵ ԱՊՕՆԵ ՖԻՅԱԹԼԱՐԸ. — Իսթանպուլ իշին սէնէլիկի 60 դրուշ, = 6 պլըդը 35. — Թաշրա իշին սէնէլիկի 85. — 6 պլըդը 45 դշ. տուր: — Բօսթա իւնքերի պիզէ ալիս տիր: — 15 կիւնքիւք նիւսիս 60 բարա տըր: — ԻԼԱՆԱԹ ՇԱՐԹԼԱՐԸ. — Կիւնքի սահիֆէնին պէնէր սըրասը 5, ձեճի վե Յիւնճիւ սահիֆէնին պէն սըրասը 3, վե Կիւնճիւ սահիֆէնին պէնէր սըրասը 1 դրուշ տուր: — Զօգ տէֆա տէրճ իսիլէճէք իսիլսիթ իշին սայրճա բաղարըզ օրոնուր: — Նիւսիսիս 30 բր. տըր:

Ղազէթաւ միւթէալիք խուսուսաթ իշին ՅԱՎՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆ միւրաճաթ օրոնաւ: — Կառքէթանէ Պէյօղլուստա ճառաթի քէպիթաթ Ն. 65:

ՀՈԳԻԻ ԽՕՍԲԵՐ

ՆԱՄԱԿ ԶՈՐՐՈՐԴ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՎԱԿԱՍ

Ի Թօփալի

(Շարունակութիւն և վերջ)

Մեծն Նարոյէնի երբ հարցուցին իր զօրապետները թէ, ինչ կ'ըսէք, Տէր, կայ թան մը... այո՛, պատասխանեց զայրացած, կայ, և շատ խոշոր բան մը, որոյ քով դուք և ես, բոլոր զօրութեամբս, բանակներովս, զօրքերովս, զօրապետներովս, Ձեզմով, Ձեզ հետ, ոչինչ ենք, ես կ'ըզամ այդ Աստուածը՝ կը ճանչնամ, կը հաւատամ Աստուծոյ, եթէ դուք չէք զգար և չէք հաւատար, վայ Ձեզ, ՀԱՍԿԸՑԱՐ:

Գիտական աշխարհի Գոյնուպն, բնական Պէյքն, գիտէք ինչո՞ւ, որովհետեւ Գիտութեան ճամբան չտկեց, կոկեց, դիւրացեց, նոր լուսաւոր ճամբայ մը քայլած անոնց՝ որք կ'ըզեն սորվիլ բնութիւնը և իրեն օրէնքները. այս մեծ գիտունը, այս մեծ փիլիսոփան Աստուծոյ ուղղելով խօսքը կ'ըսէ. «Բու արարածներդ իմ գրեթե եղան, և Ա. Գիրքդ իմ խորհրդատուս, մենտորս, առաջնորդս. ես գիտեմ կը փնտռէի մեծ, շատ մեծ տեղեր, բայց զի՛նք զտայ ամէն տեղ...»

Լէյպցից՝ այն մեծ քաղաքագէտը՝ այն մեծ փիլիսոփան, ինչ մեծ խառնուրդ և կորովով պաշտպանած է ճշմարտութիւնը՝ նիւթապաշտներու դէմ:

Բէյքըրը այն ամենաբարձր աստիճանի միաբն աշխարհի ներդաշնակութեան վրայ խօսելով, կ'ըսէ. «Աստուած իմ, Դու որ բնութեան լոյսով մեր մէջ վառեցիր փափաք, բաղձանք, Բու շնորհացդ լոյսին հասնելու, փառք Բեզ Արարիչ Տէր, փառք Բեզ, թոյլ տուր որ Բու գործերովդ ցնծամ, և փառաւորուիմ, և մարդկանց պատմեմ Բու գործերուդ փառքը, որքան որ միաքս կրնայ ըմբռնել անոնց վեհութիւնը:»

Դերման ականաւոր գիտնական խուզարկու միտքն Վերտով, զոր անուանեցին Դաստիարակ համօրէն աշխարհի, Վերտով կայսեր ինքնագիր մի նամակը և գիտութեանց մեծ ոսկի շքադրամը ընդունեա՞ծ ատեն, ըսած է. «Շնորհիւ Աստուծոյ կ'արժանանամ»:

Մեծն Միլտոնը ըսաւ հաւատոյ երջանիկ գիտութեան մէջ. «Ես ապահով և հանգիստ կը հանգչիմ. իսկ դուք «խնամատակ գիտուններ», Ձեր ծուռ գիտութեամբ պիտի կորսուիք»:

«Անգղիական Աստուած, ձայն տուր թէ կաս իրաւի», ըսող վայրագ քերթողն՝ երկնից կարօտով հայեցաւ ու մաշցաւ, և իր երգերը Աստուածաբան պաշտամբ խառն մշտնադաշտ աղօթք մ'իզան:

Կարգացէ՛ք ինքերս! Dernières paroles de grands hommes, որքան որ միաքս կուգայ, բնեմ մի քանին: Լիթթէն միտնելէն քանի մ'օր առաջ իր բժշկին կ'ըսէր «Docteur, je me vois entrer dans la grande nature»: Կան կարգ մը «զէվզէքներ» որ կ'ըսեն իրաստակօրէն, «էօրեմտէն էօթէ»

յէ քէօյ վաճը մը» ժողովրդական լեզուով. խեղճէ՛ր, քէօյն մեծը անդին է:

Գերագոյն արարած մը, գերագոյն վախճանի մը համար ստեղծուած է. հաւատքը միշտ կը կրկնէ իր անուշ ձայնը՝ թէ կեանքը հոս չի վերջանար...

«Seigneur, je recommande et je remets mon âme entre vos mains» Շոն: Ահա որքն անաստուած մը, որ արեւածագին կը կանչէ. «Je crois, je crois en toi, s'écrit-il avec enthousiasme, Dieu puissant, je crois, répétait-il encore.» Դուք քեզմէ՛ վ. Հիւսօ կ'ըսէր. «Je vois cet œil», Աստուծոյ ամենատես աչքն կ'ակնարկէր. «C'est œil me regarde toujours». այդ աչքը՝ տեսնալու համար առողջ, զօրաւոր աչքեր ունենալու է, «ճպրտա, ցաւոտ, կարճատես» աչքեր բնական է չեն կրնար տեսնել: Ո՛չ ոք Գոյնուպնի պէս ուսումնասիրած է երկինքը, երկիրը և ծովը, և որոյ համար մեր միջնորդը գաղտնիք մը չունեցաւ. այդ հայկապ մարդը, այդ ուղիւստու մեծ սպարապետը, այդ փոխանիս հակա, իր գտած երկրին ծովափին վրայ ծուռ ինքն գեանատարած կը համարէ հոգն արտասուած լեզու, վեր կը նայի, փառք կուտայ և իր յաղթական դրօշը կը պարզէ ըսելով:

Դրօշը թագաւորի յառաջ խաղան խորհուրդը իմալի փալաւ շողան:

Այս մեծ գիտունները գիտական աշխարհի «աղբերաններն են, որ բարձրացած են իրենց շուրջ կեցող բոլորներու մէջ. մեծը ասոնց քով, սիրելիս, բարեկամս, չցաւիս թէ ըսեմ, գաճաճներ, թողունք ենք. երբ այս մեծ մարդիկ, իրենց խոշոր գլուխներով, քննած, պրպտած, ընդունած և ըսած են, խոստովանած են «Թէ կայ Աստուածային պատճառ մը, գերագոյն բանականութիւն մը, անվախճան էակ մը, բնութեան օրէնքները չէին կրնար ինչնին ծագել կամ հաստատուիլ... ուսումնա մեզ ինչ կ'իշխայ, դուք ըսէ՛ք...» Երկաթ ծամելու համար պողպատ ակռանք պէտք է:»

Ես քեզ գրեցի, միտքը թնճկած, սիրտը պղտորած է. ցաւած էիր, բայց սիրելիս, ճշմարտութիւնը ըսելուս ինչո՞ւ կը ցաւիս: Ես քեզ կ'ըսեմ, վերնայե, (թէ և իրաւունք չունիս վերնայելու), դուն յաւատարմութեամբ, ամբարտաւանութեամբ կը պատասխանես... Այո՛, կը նայիմ, բայց աստղաբաշխի աչքերով... Զգո՛ւշ, բարեկամս զգո՛ւշ, առեւեղ հոր մը կայ խոր, անդունդ մը կայ, որ չես տեսնար, զգո՛ւշ, մէջը կ'իշխաս:

Խեղճ աղայ, Սքրոքէր մը՝ երբ մեծ հեռադիտակի մը մէջէն սկսաւ դիտել երկնից վեհափառ տեսարանները, ետ քաշուեցաւ, ծուռ ինքն, վեր նայեցաւ և ըսաւ. «Մարդու երեւակայութիւնը կը թաքի, բանականութիւնը կը ցնդի, թուագիտութիւնը չի յաջողիր, մարդկային աչքերը կը վախճան անդունդին նայլ. տիեզերքի մեծութիւնը կը ջախջախէ, կը դողացնէ երեւակայութիւնը, և անոր անհղիւղութիւնը այնպէս ըմբռնելի են, ինչպէս յաւիտեական Աստուած», և դու

դեռ կը դիտես, և աստղաբաշխի աչքերով կը դիտես. վայ քեզ... Ռեքէ՛ այդ հպարտութիւն, ո՛րքէ՛ այդ գոռոզութիւն, ինչո՞ւ այդ յոխորտանք, ինչ ամբարտաւան հայեցում...:

Անուանի փիլիսոփան Դաւիթ Հիւս՝ խոստովանեցաւ անկեղծութեամբ թէ, ես ալ կը դարձնուիմ և կը շուարիմ փիլիսոփայութեան. երբ կը դարձնուի աչքս իմ վրաս, ուրիշ բան չեմ գտնար, եթէ ոչ ասարկոյս և սգխտութիւն: Ուրեմն, ինչ եմ, և ինչ կ'ըսեմ... Ահ, թոյլ տուր թշուառ բարեկամս, թոյլ տուր որ նոյնը Ձեզ կրկնեմ:

Բրուտոնի Ֆրանսուայի մէջ անհաւատութեան դրօշակիրը ճանչցուած էր, և յիշատակի հրապարակաւ Աստուած չէր ճանչնար. երբ իրեն ըսին, ահա՛ Բրուտոն, ահա՛ մարդ մը որ Աստուած չի ճանչնար, Բրուտոն զայրացած պատասխանեց. «Կը ներէ՞ք, qu'en savez-vous?»: Ըսե՛ք է այդպիսի նախադիմ մը չկրցաւ տանիլ:

Սկիզբն իրատեսութեան երկու ճեւածն է, և այս ըսողն դարեւ առաջ իմաստուն տիեզերքի արժանապայծէ է. միթէ փիլիսոփայ, գիտուն, իմաստուն լինելու համար՝ հարկ է թշնամի լինել իմաստութեան, և գիտուն ըսելու համար՝ պէտք է անգիտել ամենէն վսեմ և գերբնական ծանօթութիւններն. զԱստուած աստիճանով է լինել լուսաւորեալ ճանչցուելու համար, և ստոյ բազմաթիւ կանգնել լուսոյ խնկարկու հռչակուելու համար, և Աւետարանը ոչտք է բոլորովին ուրանալ՝ ամենէն զարգացեալ և ամենէն աւելի գիտնական երեւակաւու և գերզանցելու համար:

Խեղճ աղայ. վերցուր Աստուած, և ահա վայ մեզ. ամէն ինչ երազ է, սիրտը մոխիր, յոյսը հող, հաւատքը կուրծքին, ահա այս է Ձեր ըսածը, ըմբռնածը, դաւանածը և քարոզը. ահ, ողբալի անկում, որ ընաւ չունի կանգնում: Ուրացող գիտութիւն, վատասող, հիւանդոտ գրաւանութիւն, խեղճ ու կրակ, աղօտ երեւակայութիւն, լուսահատ և տափալ փիլիսոփայութիւն, ծանծաղ արամբարանութիւն, անկումի սեւ վարդապետութիւն, կեղծիք կեղծեաց ամենայն ինչ կեղծիք, այնպէս չէ՛. աշխարհ աստութեանց կոյտ մը, ամպերու զանգուած մը, ունանութեանց պարկ մը դառնացած է: Վայ Ձեզ, աղտոտ գրքերու ընթերցմամբ պղծուած, ծուռ վարդապետութեանց ազդեցութեան տակ անէացած մտքեր...:

Ինչ նկարագիր կարելի է սպասել բարոյական անկեղծ միջնորդութի մէջ անած և մեծցած սերունդէ մը. յանցանքը Ձերը չէ բարեկամս, ես գիտեմ որունն է: Ձեր միջնորդութեան օտար ուսուցիչներունն է, որ դեռ չեն կրցած ըմբռնել, չեն ուզեր ըմբռնել թէ բարօք դաստիարակութեան մը հիմը կը կազմէ Կրօնը և Բարոյականութիւնը Կրօնը ամենէն չինքն ոյժն է մարդկութեան, անոր մէջ կը փնտռենք և կը գտնենք դարման մեր հոգեկան տառապանքներուն, ամբարկու պատնէշ մեր ամէն օրուայ փորձութեանց հանդէպ: Հաւատքը

յուսոյ հիմն է, իսկ բարոյականութիւնը՝ ընկերութեան: «La morale est la base de la Société.»

Կիսկատար փիլիսոփայութիւնը՝ մարդու միտքը անհաւատութեան կը աանի, իսկ խորին փիլիսոփայութիւնը դէպի Աստուած, դէպի կրօնը: Փախիր այդ մարդկանցմէ որ բնութեան գործքերուն մեկնութիւն տանք ըսելով, ցաւալի սկզբնաբնութիւն կը սերմանեն միամիտներու սըրսին մէջ:

Գիտութիւն կը պօռաք, կը կանչէք, բայց գիտութեան ընաւ «խապար» չէք, դուք Ձեզ բանդէտ, բնագէտ կը հռչակէք, բայց ներկեցէք որ ըսեմ, արդեամբ ասոնցմէ շատ հեռի էք:

Շատ կարծր, շատ հաստատուն է գիտութեան հողը. զայն փորելու համար, լոյս, խնդ, ոյժ, կարողութիւն, համբերութիւն, յարատեւութիւն պէտք է:

Ո՛հ, բարեկամս, խորունկ փորէ գիտութեան հողը թէ կրնաս, խորունկ և շատ խորունկ, նախ մեծ մեծ, խոշոր, շատ խոշոր քարերու պիտի հանդիպիս, և պիտի փռես զանոնք, նորէն պիտի փորես, քարէն վերջ կուգայ կապար, երկաթ, պղինձ, արծաթ և ոսկին ամենէն վերջ. իսկ թէ աւելի խորկնաս, աղամանդ պիտի գտնաս, աղամանդ: Ես փորած, գլուխս, ոսկոյն հասած, աղամանդէն չլացած եմ... հաւատոյ տաք, վառ, անոյշ արեւը ներսս ծագած է, կենաց աղբիւրը սրահս կը բղխայ. այն քառաթեւ յաղթական իմաք հաստատուն հիման վրայ ցցուած, հոգեւոր աւագ խորանին վրայ կանգնած է անձեռնմխելի. հոգիս հաւատքով կը ինքայ, աչքերուս ետեւ աչք մ'ալ կայ, որ միշտ վեր կը նայի, աչքի սուրբ և ճշմարիտ սեւեռումով, հաւատքով, յուսով և սիրով...:

Ահ, գիտեմ, ցաւ ի սիրտ կը տեսնեմ թէ խաբարած է բարոյական կեանքիդ դիւրաբեկ նաւակը, բայց չեմ յուսահատիր, պիտի ժողվեմ այդ ցրտած բեկորները և պիտի աշխատիմ վերաշինել ջախջախուած նկարագիրդ. պիտի ըսեմ քեզ ինչ փոյթ, բայց այդպէս չէ բարեկամս, կը սխալիս չարաչար. իբրեւ ընկեր, բարեկամ, թէ՛ պարտական և թէ՛ պատասխանատու կըզգամ. դառցի՛ր, ետ դառցիր այդ խաւար և մոլոր, ծուռ ու ծաւաճուած ճամբայէդ, որ քեզ կանանչ, դաւար, ծառագորդ է ծաղկազարդ կ'երեւայ, բայց այդ ծաղկներու, այդ կանանչներու տակ օճեր կան, օճեր, իժեր կան պահուած. «Le serpent se cache sous l'herbe». հաճոյց ճամբան հրապուրիչ է, բայց ծայրը կորուստ գահալիժում է...: Տո՛ւր ձեռքդ ինձ բարեկամս, ես քեզ կը վերցնեմ, կը կանգնեմ, բաւ է որ ուղիս, արթնցի՛ր անփոյթ հոգի, արթնցիր այդ մոլոր երազներէդ, սթափէ, դուն քեզ եկուր, ո՛ւր եմ, ինչ եմ, ինչ կ'ըսեմ, մէյնը դուն քեզ հարցուր, և ըսէ՛ք, ինչ է պատճառ գիտութեան, ինչ վիճակի պիտի փոխուիմ, ինչ պիտի ըլլամ, և ո՛ւր պիտի երթամ. մէկդի թո՛ղ կ'ըսեմ անհոգեմ, մէկդի այդ սեւ, սեպսեւ վարդ

ԼՅՆՏՐԱՍՏԱ ԳՕՆՖԵՐԱՆԱՄ. — Էլան
Ֆիլմէնքտէ պաւլունան Պօէր ժէնէ,
ռալլարը, Կէնճէք հաֆթա իպթի-
սաօրնա աօղըռ Լօնտրաւա ալլանթ
տէրէք, Էվրօքանա վուդու պաւլան
Էյեանհաթլարընը մագանտինթ թէն-
վինէ թէշէպպիւս իտէնճէքլէր տիր,
Ֆէնէրալլարըն՝ Էվրօքատա Պօէր մու-
հիպպլէրի թարաֆընտան ինքա իտի-
էն նիւմաիլլէրէ գուլազ ասմանա
հազարըր վէ եալընըր ինքապը զա-
տուրի օլան զիւնարէթլէր իլէ իլթի-
քա իլլէնէնճէքլէրի՝ Լօնտրատա չիւպ-
Տէսիլ աւտ օլունմուգ, Պունարըր
էլէյտանը հալպտա նէ գաւարըր չէճի
էլ գահլուման սաքըր օլտուլար իտէ,
մահարէպէտէն սօնրա տախի օլգաւ.

Ինքիւնը ժէնէրալ, հէհէճանը արթա-

